ԱՆԳԼԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԼԵՎՈՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ

Անցյալ դարի 70-ական թվականներին Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն օբյեկտիվորեն համընկնում էր Թուրքական տիրապետության դեմ մարտնչող հայ ժողովրդի ազգային շահերին, և լիովին հակասում անգլիական խոշոր բուրժուազիայի նվաճողական ձգտումներին, որովհետև վերջինս վաղուց էր երազում Օսմանյան կայսրությունում հաստատել իր միանձնյա տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը։ Անգլիայի պրեմիեր մինիստր Դիզրայելին «պաշտպանում էր» Թուրքիային, որպեսզի ապահովեր անգլիական գաղութարարների ագրեսիվ պլանների իրագործումն Առաջավոր Ասիայում և հող նախապատրաստեր «առաջին իսկ հարմար պահին նվաճելու Եգիպտոսը»[1]։ Դիզրայելին շահագիտական նկատառումներով պառլամենտում պաշտպանում էր Թուրքիային, դատապարտում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը սուլթանիզմի լծի դեմ, փառաբանում մարդասպան բաշիբոզուկներին, նրանց համարում խաղաղասերներ, իսկ ալան-թալան անող քուրդ ցեղապետների դեմ բողոքելը՝ մեղք ու տմոթ[2]։ Միաժամանակ Կ. Պոլսի անգլիական դեսպան Հ. Էլիոտը սուլթանին խորհուրդ էր տալիս հանգցնել քրիստոնեահպատակ ժողովուրդների ազատագրական շարժման հրդեհը՝ «առանց գործադրվող միջոցառումների մեջ ընտրություն կատարելու»[3]։

1875—1876 թթ. արևելյան ճգնաժամի ժամանակ Կ. Պոլսում հրավիրվեց եվրոպական վեց մեծ տերությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որը պետք է խաղաղ ճանապարհով «կարգավորեր» արևելյան հարցը։ Կոնֆերանսում անգլիական դեսպանը բռնել էր Թուրքիային պաշտպանելու դիրք, որպեսզի այդ ճանապարհով ուժեղացներ իր ազդեցությունը սուլթանի վրա ու ամրապնդեր Անգլիայի դիրքերը Մերձավոր Արևելքում։ Հ. Էլիոտի խորհրդով՝ Աբդուլ-Համիդ II-ը ընդունեց սահմանադրություն, որը մի փորձ էր կանխելու քրիստոնյաներին օգնելու պատրվակով եվրոպական պետությունների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին։ Նրա ներշնչմամբ, գրել է Միլյուտինը, սուլթանն ընդունեց «զավեշտական մի սահմանադրություն, որին, սկսած սուլթանից ու անձամբ Էլիոտից, ոչ ոք չի հավատում»[4]։

Թուրքիային «պաշտպանելու», հայերի և մյուս թուրքահպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարելու անգլիական քաղաքականությունը, ինչպես ասվեց, բխում էր ոչ թե Անգլիայի թուրքասիրությունից, այլ Մերձավոր Արևելքում նրա կողմից հատուկ շահեր հետապնդելուց։ Այսպես, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Դերբիին Հ. Էլիո-

---

[1] А. Моруа, Карьера Дизраэли, М., 1934, стр. 334.
[2] «Голос», 1876, № 216.
[3] А. А. Гирс, Россия и Ближний Восток, СПб., 1906, стр. 178.
[4] «Дневник Д. А. Милютина», М., 1949, т. II, стр. 35.

տի հղած գրություններից մեկում ասված է. «Այն մեղադրանքին, թե ես Թուրքերի կույր կողմնակիցն եմ, միայն կպատասխանեմ, որ երբևիցե չեմ ղեկավարվել սենտիմենտալ սիրով նրանց նկատմամբ, այլ միայն աներկբա մտադրությամբ, ամբողջ ուժով պաշտպանել եմ Մեծ Բրիտանիայի շահերը պատշաճ մակարդակի վրա»[5]։ Անգլիական պատմաբան Ա. Մորուան նշել է, որ Անգլիան հատուկ համակրանք չէր տածում Թուրքիայի նկատմամբ, նա անտարբեր էր դեպի նրա ճակատագիրը, չնայած, որ Դիզրայելին Լոնդոնի Թուրքական դեսպանին հավաստիացնում էր, որ մյուս պետություններին թույլ չի տա ճնշում գործադրել սուլթանի վրա։ Անգլիայի պրեմիեր մինիստրը ցանկանում էր ապահովել «Բրիտանական կայսրության միասնությունը և Անգլիայի փայլուն ապագան»[6] և այդ ճանապարհին Թուրքիայում անգլիական ազդեցության պահպանումը դիտում էր որպես կարևոր քայլ։ Տվյալ դեպքում անգլիական պատմաբանը պարզապես արտահայտել է կառավարության պաշտոնական տեսակետը։

Անգլիան Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու մեջ տեսնում էր Արևելքում բրիտանական ազդեցության թուլացման սկիզբը։ 1877 թ. դեկտեմբերի 12-ին Կ. Պոլսի անգլիական նոր դեսպան Լեյարդը արտաքին գործերի մինիստր Սոլսբերիին գրել է, որ Հայաստանը Ռուսաստանին անցնելու դեպքում վերջինս Եփրատի ու Տիգրիսի գետահովիտներով կիջնի պարսկական գավառները և վտանգի տակ կդնի Պարսից ծոցը։ Ռուսական առաջխաղացումը կոգեշնչի Էպիրոսի, Թեսալիայի, Մակեդոնիայի հույն բնակիչներին և նրանք կապստամբեն սուլթանի դեմ։ Հետևաբար, «թույլատրելու չենք, որ Ռուսիա հողային գրավումներ կատարէ Հայաստանի մեջ»[7]։ Հետևողականորեն պաշտպանելով անգլիական խոշոր բուրժուազիայի շահերը, Լեյարդը 1878 թ. մարտի 6-ի և 17-ի զեկուցագրերում նշում է, որ Անգլիան ոչ թե Բալկաններում, այլ՝ Հայաստանում և Միջագետքում ունի մասնավոր շահեր, ուստի Ռուսաստանի դեմ անգլո-թուրքական դաշինքի կնքումն անհրաժեշտություն է, որպեսզի վերոհիշյալ շրջաններում ուժեղանան Թուրքիայի դիրքերը և նա «պահակ մնա Միջերկրականի և Հայաստանի ճամբաներուն՝ ցամաքային թե ծովային»[8]։ Անգլիական շահերը Թուրքիայում ապահովելու նպատակով, 1878 թ. ապրիլի 24-ին Լեյարդը սուլթանին հայտարարեց. «Եթե սուլթանը սերտ հարաբերություն ընէ Ռուսիոյի հետ, շատ հավանական է, որ կորսնցնէ գահը»[9]։

Խիստ անհանգստացած Արևելքում իր իմպերիալիստական շահերով, Անգլիան ուռճացնում էր ռուսական վտանգը, որպեսզի արդարացնի իր իսկ ագրեսիվ քաղաքականությունը, որի էությունը միանգամայն ճիշտ էր հասկացել Լոնդոնի ֆրանսիական դեսպանը։ 1875 թ. նոյեմբերի 19-ին նա հաղորդում էր Փարիզ, թե Անգլիայի համար «հարցը Թուրքիո ամբողջականությունը, կամ անկախությունը չէ... այսօր արևելյան հարցը Հնդկաստանի հարցն է և Ասիո մէջ Անգլիո կայսրության հարցը... Անգլիո տնտեսական շահերու

---

[5] E. Freeman, The Ottoman Power in Europe, London, 1877, p. 251.

[6] A. Moya, նշվ. աշխ., էջ 335։

[7] Խ. Գաբիկյան, Հայկական հարցը արևելյան հարցի մեջ (1860—1880), Պեյրութ, 1962, էջ 314—320, վավ. 9։

[8] Նույն տեղում, էջ 321։

[9] Նույն տեղում, էջ 322։

նկատումը Հնդկաստանի ստացվածքին մէջ զետեղված՝ չի կրնար սակայն կշեռքի մէջ դրվել այն գրավման քաղաքական շահուն հետ»[10]։ Նա իրավացիորեն գտնում էր, որ անգլիական կառավարությունը պատրաստ է Հնդկաստանի համար պատերազմել Ռուսաստանի դեմ։

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Անգլիան սուլթանին հավաստիացնում էր, որ եթե Ռուսաստանը պատերազմ սկսի Թուրքիայի դեմ, ապա այդ նույն օրն Անգլիան պատերազմ կհայտարարի Ռուսաստանին, իսկ Կ. Պոլսի ռուսական դեսպան Իգնատևին Դիզրայելին ասում էր. «Սևծովյան նեղուցները պետք է պատկանեն սուլթանին կամ Անգլիային և ուրիշ ոչ ոքի»[11]։

Դեռևս 1853 թ. Կ. Մարքսը նշել է, որ անգլիական խոշոր բուրժուազիայի համար Կ. Պոլիսը և նեղուցներն ունեն խոշոր տնտեսական նշանակություն, նա «չի կարող հաշտվել, որպեսզի Ռուսաստանը գրավի Դարդանելը և Բոսֆորը։ Այդ իրադարձությունը և՛ տնտեսական, և՛ քաղաքական տեսակետից կհասցնի խոշոր, եթե ոչ մահացու հարված բրիտանական հզորությանը»[12]։ Կ. Մարքսը բարձր է գնահատել նաև Թուրքիայի ռազմաստրատեգիական նշանակությունը։ Նա նշել է, որ Ռուսաստանը եթե նվաճի Կ. Պոլիսն ու Թուրքիան, ապա նրա «ուժերը կմեծանան գրեթե երկու անգամ և նա ավելի ուժեղ կլինի, քան մնացած Եվրոպան միասին վերցրած»[13]։

Անգլիական առևտրաարդյունաբերական բուրժուազիան Թուրքիայի տնտեսական, քաղաքական և ռազմաստրատեգիական այդ կարևոր նշանակությունից ելնելով, ձևանում էր սուլթանին բարեկամ ու պաշտպան, Թուրքիային հրահրում Ռուսաստանի դեմ պատերազմի, հոսալով եվրոպական պետություններից ստեղծել հակառուսական կոալիցիա և ջախջախել նրան, ինչպես Ղրիմի պատերազմի ժամանակ։ Անգլիան Թուրքիային հովանավորում էր այնքանով, որքանով վերջինս ծառայում էր որպես անգլիական շահերի պաշտպանության դիմակ։ Նա դեմ չէր Թուրքիայի մասնատմանը և նրա տարածքից զավթելու առյուծի բաժին։ Այդ է հաստատում Դիզրայելիի 1877 թ. փետրվարի 9-ի հրահանգչական բնույթի նամակը արտաքին գործերի մինիստր Դերբիին։ Նամակում նա հայտնում էր, որ իր կարծիքով՝ ռուս-թուրքական պատերազմը կավարտվի Թուրքիայի պարտությամբ և նրա մասնատմամբ։ Այդ դեպքում, գրում էր նա, «մենք նպատակահարմար պահին պետք է գործենք վճռականորեն և նվաճենք այն ամենը, ինչ հանդիսանում է մեր կայսրության անվտանգության համար անհրաժեշտություն»[14]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակի տարած փայլուն հաղթանակի արդյունքը 1878 թ. փետրվարի 19-ի (մարտի 3-ի) Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրն էր, որի 16-րդ հոդվածը թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր Արևմտյան Հայաստանում անցկացնել բարենորոգումներ։

16-րդ հոդվածն Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ իրագործելու, արևմտահայերին թուրքական հալածանքներից ու վրիժառությունից պաշտպա-

---

10 Նույն տեղում, էջ 315—316, վավ. 7։

11 «Русская старина», 1914, т. 159, стр. 6.

12 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 11.

13 Նույն տեղում, էջ 15։

14 W. F. Monypenny and G. E. Buckle, The Life of Benjamin Disraeli, London, 1920, vol. VI, p, 126.

նելու որոշակի երաշխիք էր, քանի որ խնդիր էր դրված մինչև բարենորոգումների իրագործումը ռուսական զորքերը պահել հայկական վիլայեթներում[15]։

Անգլիական կառավարությունը, որը տագնապով էր նայում դեպքերի զարգացմանը, 1878 թ. մարտի 27-ին հայտարարեց, որ հավանություն չի տալիս Սան-Ստեֆանոյի պայմանագրին, քանի որ Ռուսաստանն իր հայեցողությամբ բաժանել է Եվրոպական Թուրքիայի տարածքը և «ձեռքը դրել Հայաստանի մեծ մասի վրա»[16]։ Անգլիան սկսեց լարել դիվանագիտական որոգայթներ՝ Ռուսաստանի հաջողություններն ի չիք դարձնելու նպատակով։ Նա ապրիլի 1-ին դիմեց եվրոպական խոշոր պետություններին՝ առաջարկելով հրավիրել կոնֆերանս ու քննել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որով իբր թե խախտվում էր ազատ նավարկությունը սևծովյան նեղուցներում, Թուրքիան դառնում էր ռուսական վասալ, փակվում էին Եվրոպայի առևտրական ճանապարհներն Ասիայի հետ, Ռուսաստանի առաջ բացվում էին Սիրիայի դռները և ստեղծվում պայմաններ, որ նա գրավի Եգիպտոսն ու Սուեզի ջրանցքը։ Այսպիսով, անգլիական բուրժուազիային Ռուսաստանի հաջողություններն այն աստիճանի էին անհանգստացրել, որ դեմ գնալով հայ ժողովրդի կենսական շահերին, նա իր կառավարությունից պահանջում էր լրիվ վերացնել «ռուսական ազդեցությունը Հայաստանում»[17]։

Անգլիայի հակառուսական քաղաքականությունը պաշտպանում էր Ավստրո-Հունգարիան, որը պահանջում էր ճնշել Թուրքահպատակ բոլոր քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, որպեսզի ազատագրական պայքարի ալիքները չտարածվեին ավստրո-հունգարական «կարկատանային» կայսրությունում, որի «արդյունքը,— գրել է Կ. Մարքսը,— պարզապես կլիներ Ավստրիայի փլուզումը... Թուրքիան Ավստրիայի պատնեշն է Ռուսաստանի և նրա սլավոնական շքախմբի դեմ»[18]։

Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրք էին բռնել նաև Գերմանիան, Իտալիան և Ֆրանսիան։ Գերմանիայի կանցլեր Բիսմարկը, որը ռուսական կառավարությանը խոստացել էր արևելյան հարցում պաշտպանել նրան «ոչ միայն դիվանագիտորեն, այլ նաև նյութապես՝ զորքով ու դրամով»[19], երբ Ռուսաստանին սպառնում էր պատերազմի ռեալ վտանգը, ռայխստագում հայտարարեց. «Գերմանիան պետք է գթա Ավստրիային»[20]։

Բիսմարկը պաշտպանում էր Գերմանիայի դաշնակից Ավստրո-Հունգարիային, ձգտելով թուլացնել Ռուսաստանի դիրքերը Մերձավոր Արևելքում և ճանապարհ հարթել գերմանական կապիտալի համար՝ ներթափանցելու Արևելք։

Ընկնելով մեկուսացման մեջ, Ռուսաստանը հարկադրված համաձայնվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայմանը եվրոպական խոշոր պետու-

---

15 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», կազմողներ՝ Ջ. Ս. Կիրակոսյան և Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1972, էջ 92, 96։

16 R. W. Seton-Watson, Disraeli, Gladstone and the Eastern question, London, 1935, p. 396.

17 R. W. Seton-Watson, նշվ. աշխ., էջ 364։

18 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 34, стр. 247.

19 «Дневник Д. А. Милютина», т. II, стр. 144.

20 «Дневник Д. А. Милютина», М., 1950, т. III, стр. 19.

թյունների կոնգրեսում, որը հրավիրվեց Բեռլինում։ Այդ ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը որոշեց Մ. Խրիմյանի գլխավորությամբ կազմել պատվիրակություն և նրա միջոցով դիմել կոնգրեսին մասնակցող կառավարություններին՝ խնդրելով հայկական հարցը լուծել արմատականորեն։

Մինչ այդ Լոնդոնում հիմնած «Արևելյան հարցի ընկերությունը» հրատարակեց «Հայաստանը և Լիբանանը» գրքույկը[21]։ Այդ գրքույկի հեղինակ Ի. Պրոբին խնդիր էր դնում Արևմտյան Հայաստանին Լիբանանի նման տալ ինքնավարություն։ Դրա դիմաց պահանջվում էր, որ ինքնավար Արևմտյան Հայաստանը դաշինք կնքի Անգլիայի հետ։ 1878 թ. լույս տեսավ նաև «Կոնգրեսը և հայերը» դիրքը[22], որով Լոնդոնի հայ գաղութի բուրժուազիան անգլիական կառավարությունից խնդրում էր ստեղծել ինքնավար Արևմտյան Հայաստան։

1878 թ. հայերի պաշտպանությամբ հանդես եկավ լիբերալ, պացիֆիստ, Օքսֆորդի համալսարանի իրավաբանության ամբիոնի վարիչ պրոֆ. Ջ. Բրայսը, որը հիմնեց Անգլո-հայկական կոմիտե։ Այդ կոմիտեի հիմնական խնդիրն էր նպաստել անգլիական ազդեցության տարածմանը Հայաստանում։ Կոմիտեի նախագահ նշանակվեց լորդ Կարնարվոն[23]։

Անգլիայում հայկական պատվիրակությունը հանդիպեց պետական ու քաղաքական մի շարք գործիչների, այդ թվում անգլիական եկեղեցու առաջնորդ Քենտրբերիի արքեպիսկոպոսի, լիբերալների կուսակցության ղեկավար Գլադստոնի, Էդինբուրգի դուքսի, պահպանողականների կառավարության ղեկավար Դիզրայելու, արտաքին գործերի մինիստր Սոլսբերիի և ուրիշների հետ։ Այդ հանդիպումների ժամանակ Մ. Խրիմյանը խնդրեց, որ նրանք պաշտպանեն հայոց արդարացի դատը։ Սակայն նրանցից ոչ մեկը հայկական հարցի լուծմանը գործնական օժանդակություն չխոստացավ։

Դիզրայելին ու Սոլսբերին հայկական պատգամավորությանն ընդունեցին շատ սառը։ Առաջինը հրաժարվեց Մ. Խրիմյանի հետ խոսել հայկական հարցի մասին, իսկ երկրորդը՝ նրա թախանձագին խնդրանքին պատասխանեց. «Իմ անունից բարևեք պարոն Ներսեսին (Կ. Պոլսի հայոց պատրիարքին— Լ. Բ.) ու ասեք նրան, որ մտածի միայն Թուրքիայում ապրող իր ժողովրդի խռովահույզ մտքերը հանգստացնելու մասին»։ Մ. Խրիմյանի այն համառ պնդմանը, թե ռեֆորմների անցկացումը անհետաձգելի անհրաժեշտություն է, նա պատասխանեց. «Իսկ ի՞նչ եք սպասում Անգլիայից։ Նավատորմիղն ուղարկի հայկական սարահարթը։ Ոչ, ես ձեզ ասում եմ՝ խաղաղվեք և համբերեք, եթե միայն չեք ցանկանում ավելի վատ բախտի արժանանալ։ Ժողովուրդների պատմական բախտը չի դրսևորվում մի քանի օրում։ Չի կարելի բռնանալ պայմանների վրա։ Ամեն ինչի ժամանակը պետք է գա»[24]։

1878 թ. սկզբին անգլիական պառլամենտում հայկական հարցը բարձրացնում են լորդերի պալատի անդամներ Շեֆտսբերին և Կարնարվոնը։ Կարնարվոնը գտնում էր, որ Անգլիան պետք է նպաստի Արևմտյան Հայաստանում բա-

---

21 Սարուխան, Հայկական խնդիրը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 375—376։

22 Նույն տեղում, էջ 376։

23 Նույն տեղում, էջ 378։

24 М. Нейман, Армяне, СПб., 1899, стр. 256, 257.

բենորոգումների իրագործմանը և նվաճի արևմտահայերի համակրանքը, քանի որ նրանք տեսնում են, որ արևելահայերն ավելի լավ են ապրում, քան իրենք և ձգտում են միանալ Ռուսաստանին[25]։ Պատասխանելով Շեֆտբերիին և Կարնարվոնին, Սոլսբերին ասում է, որ ինքը չի կարող կոնգրեսի անունից որևէ խոստում տալ[26]։

Դիզրայելին, որը հայկական հարցի բարեհաջող լուծման մեջ տեսնում էր Ռուսաստանի հաղթանակը և Անգլիայի ասիական տիրապետությունների վտանգումը, հայտարարեց. «Մեզ համար կարևորը հայկական վտանգին դեմ պաշտպանվելու միջոցներ գտնելն է»[27] և համառորեն դիմադրեց հայկական հարցի լուծմանը։ Այդ նպատակով նա բարձրացրեց Թուրքիայի «status quo»-ի պահպանման սկզբունքը[28]։ Դեռևս 1876 թ. Հ. Էլիոտը գրել էր, որ Անգլիայի շահերի պաշտպանությունը սերտ կապված է Թուրքիայի գոյության ու ամբողջականության պահպանման հետ։ Նրա կարծիքով անգլիացիները կարող են վրդովվել Բուլղարիայում թուրք ջարդարարների կատարած գազանություններից, բայց պետք է գիմագրեն Բալկանների քաղաքական քարտեզի փոփոխությանը և որ անգլիական շահերը պահանջում են հաշվի չառնել «արդյոք 10 թե՞ 20 հազ. բուլղարներ ջարդվեցին», և որ դա «չպետք է դառնա բավականաչափ պատճառ մեր (Անգլիայի— Լ. Բ.) շահերին միակ ձեռնտու քաղաքականությունը փոխելու համար»[29]։

Անգլիական կառավարությունը հայկական հարցում ղեկավարվում էր «Անգլիան չունի ո՛չ մնայուն բարեկամներ, ո՛չ էլ մնայուն թշնամիներ, այլ ունի միայն մնայուն շահեր» սկզբունքով, որ առաջ էր քաշել լորդ Պալմերստոնը։ Այդ են վկայում պառլամենտի անդամներ լորդ Քեմպբելի և Նեպիրի ելույթները։ Քեմպբելը հայտարարեց, որ անկախ քրիստոնեահպատակ ժողովուրդների նկատմամբ թուրքական կառավարման բնույթից Անգլիայի շահերը շարունակում են գոյություն ունենալ Բոսֆորում[30], իսկ Նեպիրը շեշտեց, որ «Անգլիայի առևտուրը Պարսկաստանի ու Միջին Ասիայի հետ, Հնդկաստան տանող կոմունիկացիոն ճանապարհների պաշտպանությունը... և այնտեղ ներդրված բրիտանական կապիտալներն այն նկատառումներն են, որոնք հաստատում են մեր մեծ շահագրգռվածությունը թուրքական կայսրության անկախությունն ու ամբողջականությունը պահպանելու գործում»[31]։ Ահա թե ինչու էր իշխան Վելինգտոնը պնդում, թե «Ռուսաստանի տիրելը Հայաստանի վրա՝ շատ վտանգավոր կլինի Բրիտանիայի շահերին»[32], Դեռնրավրն լորդերի պալատում հայտարարում, որ այդ «հակասում է Անգլիայի շահերին»[33], իսկ Դիզրայելին, հիմնավորելով Թուրքիայի «status quo»-ն պահպանելու և նրա հետ Կիպրոսի

---

25 „Hansard's Parliamentary Debates", London, 1878, vol. 240, p. 1242—1244.

26 Նույն տեղում, էջ 1245—1246։

27 Գ. Ահարոնյան, Մեծ երազի ճամբուն վրա, Պեյրութ, 1964, էջ 34։

28 Թուրքիայի «status quo»-ի պահպանման քաղաքականությունն առաջին անգամ առաջ է քաշվել 1815 թ. Վիեննայի կոնգրեսում՝ Ռուսաստանի դեմ։ Սակայն այն միաժամանակ ուղղվեց սուլթանի քրիստոնեահպատակ ժողովուրդների դեմ և բարդացրեց նրանց ազատագրվելու հարցը։

29 E. Freeman, նշվ. աշխ., էջ 251։

30 „Hansard's Parliamentary Debates", London, 1876, vol. 230, p. 399.

31 Նույն տեղում, էջ 411։

32 «Մշակ», 1878, № 60։

33 Նույն տեղում։

կոնվենցիան կնքելու քաղաքականությունը, ասում, որ Ասիական Թուրքիայում իրենք ունեն մասնավոր շահեր, որպիսին չունի մի այլ պետություն, հետևաբար պարտավոր են Անգլիայի «շահերը պաշտպանելու համար (ընդգծումը մերն է—Լ. Բ.) արգելել այդ կազմալուծումը»[34]։

Անգլիայի պետական ու քաղաքական գործիչների ելույթները ցույց են տալիս, որ նրանք ղեկավարվում էին միայն շահադիտական նկատառումներով, իսկ Թուրքիայի ամբողջականությունը «պահպանելու» նրանց հայտարարությունները լոկ նպատակ ունեին խոչընդոտել ինքնավար Հայաստանի ստեղծմանը, որը համապատասխանում էր ռուսական շահերին և հակասում անգլիականին։ Դրանով է բացատրվում բուրժուական Անգլիայի խիստ թշնամական դիրքը հայ ժողովրդի նկատմամբ։ Ահա թե ինչու էր Կ. Պոլսի անգլիական նոր դեսպան Լեյարդը հայտարարում, որ Հայաստանը ոչ թե երկիր է իր բնական սահմաններով, այլ աշխարհագրական հասկացություն, որ այնտեղ հայերը բնակչության փոքրամասնությունն են կազմում և որ վաղաժամ ու անհնար է հայերի համար ռեֆորմների իրագործումը[35]։ Չկա Հայաստան, կա Քրդստան, պնդում էր նա, իսկ Սոլսբերին Մ. Խրիմյանի խնդրանքներին լկտիաբար պատասխանում էր. «Հինգ գարու հիվանդ մը մեկ օրվան մեջ չի կրնար առողջանալ»[36]։ Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը նրանք միտումնավոր ձևով համարում էին սոցիալական հիմքից զուրկ շարժում։

1878 թ. հունիսի 4-ին Անգլիան Թուրքիայի հետ կնքելով Կիպրոսի կոնվենցիան, խոստացավ պաշտպանել նրա արևելյան սահմանները և օգնել ճնշելու արևմտահայերի ազատագրական շարժումները։ Բեռլինի կոնգրեսում Անգլիայի ճնշման տակ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով, որն ավելի բարդացրեց հայկական հարցի լուծումը։ Դրանով Անգլիան ամրապնդեց թուրքական տիրապետությունն Արևմտյան Հայաստանում, իսկ Թուրքիայի «status quo»-ի պահպանումը, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, Բ. Դռան քրիստոնյա հպատակների համար նշանակում էր «նրանց ճնշման հավերժացում»[37]։

Թուրքիայի «բարեկամ» պետությունները, որոնք Բեռլինի կոնգրեսում խոչընդոտեցին հայկական հարցի լուծմանը և պահանջում էին պահպանել Թուրքիայի ամբողջականությունը, Օսմանյան կայսրությունից զավթեցին Կիպրոսը, Բոսնիան և Հերցոգովինան։ «Կողոպտում («բաժանում են») Թուրքիան (Ռուսաստանը+Անգլիան+Ավստրիան)»[38],— գրել է Վ. Ի. Լենինը։ 61-րդ հոդվածն էլ ըստ էության խոստումներ էր ռեֆորմների մասին, առանց նրանց իրագործման ռեալ երաշխիքի։ Այն արմատապես փոխեց 16-րդ հոդվածի բովանդակությունը և արևմտահայությանը դատապարտեց կործանման, քանի որ 61-րդ հոդվածով Անգլիան նպաստեց արևմտահայության բռնի ասսիմիլյացիայի ու ֆիզիկական բնաջնջման սուլթանիզմի քաղաքականության իրագործմանը։ Չնայած դրան, Անգլիայի գաղութային գործերի պետական քարտուղար լորդ Սանդոնը պառլամենտում հայտարարեց, որ Անգլիան Բեռլինի կոնգրեսում հա-

---

34 Խ. Գարիկյան, Նշվ. աշխ., էջ 244։

35 «Մշակ», 1879, № 107։

36 Ա. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, Իր կյանքը և գործը, իր 60-ամյա հոբելյանի առթիվ, Գահիրե, 1927, էջ 227։

37 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 31.

38 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 39, էջ 843։

յերին վնաս չտվեց և նկարագրում էր, թե նա ինչպիսի բարիքներ է թափելու հայերի գլխին։ Ըստ նրա, Արևմտյան Հայաստանում հաստատված անգլիական պրոտեկտորատի շնորհիվ վայրի երկիրը կծաղկի վարդի նման, քրդերի հրացանների մահացու գնդակների սուլոցներին կփոխարինի շոգեգուլանի ձայնը, Հայաստանն արագ կբարգավաճի ու կհարստանա[39]։ Սանդոնի ելույթը հայկական հարցում անգլիական կառավարության քաղաքական երկերեսանիության տիպիկ օրինակ էր։

Անգլիական կառավարությունը ոչ միայն չօգնեց Հայաստանի ծաղկմանը, այլև «մոռացավ» բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ հանդիսավոր ձևով իր վրա վերցրած պարտավորությունները։ Պատմությունը ցույց տվեց, որ 61-րդ հոդվածը ճակատագրական դեր խաղաց արևմտահայության կյանքում։ Այդ փաստն ընդունել է անգլիական պառլամենտի անդամ Վ. Հարկուրտը։ Նա իրավացիորեն ասել է, որ 61-րդ հոդվածը ոչ թե «հիասթափեցնող» էր, այլ բացարձակապես չի արտահայտել հայ ժողովրդի զգացմունքները, չի պաշտպանել նրա շահերը և որ Հայաստանի ողբերգական իրադարձությունները այդ հոդվածի ծանր հետևանքներն են[40]։ «Մեր ներկայացուցիչները,— ասել է Գլադստոնը,— Պերլինի մեջ ազատության կողմը բռնելու տեղը, ստրկության կողմը բռնեցին, վարչապետ ու արտաքին նախարար Մեթերնիխի շեշտերը ներկայացրին»[41]։ Լ. Ջորջն իր հուշերում խոստովանում է, որ Բեռլինի տրակտատն Անգլիայի կողմից Ռուսաստանին պատերազմով սպառնալու արդյունք է և այն արևմտահայությանն արգելեց անցնել «ռուսական դրոշի պաշտպանության ներքո... Դժբախտ հայերին նորից ճնշեց իր հին հարստահարողի գարշապարը»։ Այնուհետև նա ասում է. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը, ճակատագրական անխուսափելիությամբ հասցրեց 1895—1897 ու 1909 թվականների սարսափելի կոտորածներին և 1915 թվականի ահավոր ջարդերին»[42]։ Լ. Ջորջն ընդունում է, որ անգլիական կառավարությունը պատմության առաջ պատասխանատու է հայկական կոտորածների համար։ «Հենց մենք,— գրել է նա,— թուրքերին հնարավորություն տվինք կատարելու այդ հանցագործությունները... որի համար պատմությունը միշտ մեր վրա կբարդի հանցանքի պատասխանատվությունը»[43]։ Նա նաև նշում է, որ Հայաստանը ողջակիզվեց անգլիական գաղութային քաղաքականության հաղթանակների «զոհասեղանի վրա»[44]։ «Եվրոպան և առանձնապես Անգլիան,— գրել է հայտնի արևելագետ Լինչը,— դժբախտ ազգի (հայ—Լ. Բ.) նկատմամբ խաղացին ստոր խաբեբայի դեր»[45]։ Նույն մտքերն արտահայտել է նաև Արգայլի դուքսը։ «Եթե մենք,— գրել է անգլիական պառլամենտի անդամ Ջ. Բրայսը,— ռուս-թուրքական պայմանագրի 16-րդ հոդվածը չփոխեինք Բեռլինի կոնգրեսի շարաբաստիկ 61-րդ հոդվածով, ապա Ռուսաստանը վաղուց Հայաստանը միացրած կլիներ իր տիրապետություններին, բազմատանջ հայ ժողովրդին ազատագրած Թուրքիայի բարբարո-

---

39 М. Мак-Колль, Ответственность Англии перед Арменией («Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 196).

40 „Hansard's Parliamentary Debates", London, 1896, vol .37, p. 96.

41 Ե. Գաբիկյան, նշվ. աշխ., էջ 245։

42 Л. Джордж, Правда о мирных договорах, М., 1957, т. 2, стр. 390.

43 Նույն տեղում։

44 Նույն տեղում։

45 Х. Ф. Б. Линч, Армения, путевые очерки и этюды, Тифлис, 1910, т. II, стр. 11.

սական տիրապետությունից»[46]։ Անգլիական կառավարության դիվանագիտական մութ ծալքերին քաջատեղյակ լորդ Շերբրուկը ընդունում էր, որ Անգլիան հայերի առաջ «փակեց դժոխքից դուրս գալու ելքը»[47]։

Հետագայում սուլթանը լրիվ անտեսեց 61-րդ հոդվածը, իսկ Անգլիան մոռացության մատնեց Բեռլինի տրակտատով և Կիպրոսի կոնվենցիայով հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու իր պարտավորությունները։

Բեռլինի կոնգրեսը դիվանագիտական «լկտի կոմեդիա էր»[48], իսկ նրա որոշումները՝ աղաղակող էին ու անարդարացի և ունեին խիստ հակառուսական ու հակահայկական ոգի, որը դրանց հաղորդել էին Դիզրայելին ու Սոլսբերին։ Այդ մասին ռուս լրագրող Ե. Ռագոզինան գրել է. «Ռազմադաշտում հաղթեցինք մենք, բայց մեզ դրա համար չթույլատրեցին անգամ զբոսնել Ցարգրադի (Կ. Պոլիս—Լ. Բ.) փողոցներում, մինչդեռ Անգլիան ստացավ Կիպրոսը, որը նրան վաղուց էր հրապուրել, Ավստրիան... զավթեց Բոսնիան ու Հերցոգովինան, իսկ Թուրքիային զոռով հագցրին ծաղրուծուի կապան, որում նա մինչև հիմա պճնըվում է»[49]։ Իրոք, առանց մի գնդակ արձակելու, առանց մի կաթիլ արյուն թափելու Անգլիան և Ավստրո-Հունգարիան զավթեցին Թուրքական տերիտորիաներ, իսկ փոխարենը Թուրքիային վերադարձրին Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Արևելյան Ռումելիան և Արևմտյան Հայաստանի մի զգալի մասը՝ բուլղարներին ու արևմտահայերին դատապարտելով ֆիզիկական բնաջնջման ու բռնի ասսիմիլացման։ Ահա քաղաքակիրթ բուրժուական Եվրոպայի մեծ տերությունների ողորմածությամբ արևելյան հարցի «հումանիստական» սկզբունքներով լուծման պատկերը։ Այդ պատկերն այնքան վրդովեցուցիչ էր, որ անգամ բուրժուական պատմաբանները, Բեռլինի կոնգրեսի աշխատանքները հանրագումարի բերելուց հետո, խոստովանել են. «Պատմության մեջ քիչ կդրտնըվեն այդպիսի ահավոր և անարդարացի որոշումներ»[50]։

Բուրժուական Անգլիան արևմտահայությանն արգելեց թոթափել իր դարն ապրած թուրքական բարբարոսական լուծը։ «1878 թվականից,— գրել է պրոֆ. Է. Դիլոնը,— մեր միջամտության շնորհիվ... հայկական հինգ նահանգներում հաստատվեց կառավարման գաղանային սիստեմ, որի համեմատ Հարավային նահանգների (ԱՄՆ-ի—Լ. Բ.) ստրկատիրական դաժան սիստեմը հանդիսանում է աննշան չարաշահություն։ Մենք հանդիսավորությամբ ոչնչացրինք Քավարանը և ակնհայտ նպաստեցինք Դժոխքի ստեղծմանը» Հայաստանում, «մենք թողեցինք, որպեսզի կառավարման հիմար, անկանոն սիստեմը աստիճանաբար վերածվի անխնա չարդերի հրեշավոր քաղաքականության»[51]։

Պատմության մեջ քիչ են այնքան դաժան, վիրավորական, նվաստացուցիչ և ժողովուրդներին հիասթափեցնող որոշումները, ինչպիսին 61-րդ հոդվածն

---

46 «Кавказское слово», 1918, № 272.

47 М. Мак-Колль, Ответственность Англии перед Арменией («Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», стр. 196).

48 «История XIX века», под ред. Лависса и Рамбо, М., 1937, т. 7, стр. 430.

49 Е. А. Рагозина, Из дневника русской в Турции перед войной 1877—1878 гг., СПб., 1910, стр. 142.

50 «История XIX века», т. 7, стр. 447.

51 Эм. Дилонн, Положение дел в Турецкой Армении («Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», стр. 329).

էր։ Հայկական հարցը մնաց բաց, ինչպես Հ. Թումանյանն է ասել, «արյունոտ ու արցունքոտ»[52] հարց։ Պատմությունը ցույց տվեց, իրավացիորեն գրել է սովետական պատմաբան Վ. Խվոստովը, որ 61-րդ հոդվածը արևմտահայերի համար դարձավ ճակատագրական և «նրանց մատնեց ֆիզիկական բնաջնջման»[53]։

Այսպիսով, անգլիական կառավարությունը խոչընդոտեց հայ ժողովրդի արևելյան ու արևմտյան հատվածների միավորմանը, Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալուն, անգամ այնտեղ բարենորոգումներ անցկացնելուն և դարձավ թուրքական բռնապետության հանցագործությունների աջակիցը։

Այսօր, երբ հայ ժողովուրդը նշում է Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միացնելու 150-ամյակը, որպես պատմական խոշոր իրադարձություն, էլ ավելի ցայտուն են երևում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ճշտությունն ու առաջադիմական նշանակությունը։

АНГЛИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС В 1870-х ГОДАХ

ЛЕВОН БАЙРАМЯН

Резюме

В 1870-х гг. национально-освободительное движение армянского народа было направлено против деспотического режима султанизма и колониальной политики Англии в Турции и Западной Армении, проводившейся под маской сохранения целостности Оттоманской империи.

После русско-турецкой войны 1877—1878 гг. Англия совместно с другими державами Европы, угрожая России войной, заставила пересмотреть Сан-Стефанский мирный договор на Берлинском конгрессе, где 16-ая статья, относящаяся к армянскому вопросу, была заменена 61-ой статьей, за что, как аванс, получила Кипр и усилила свое влияние в Турции.

61-ая статья Берлинского трактата была по сравнению с 16-ой статьей Сан-Стефанского договора не только шагом назад; она оказалась прямо пагубной для Западной Армении и армянского народа.

---

52 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1951, հ. 4, էջ 226։

53 В. М. Хвостов, История дипломатии, М., 1963, т. II, стр. 333.